Դասի թեման՝ Ապահով համացանց

Դասարան 7–րդ

Վահագն Վարդևանյանի անվան համար 173 հիմնական դպրոց։

Ինֆորմատիկայի ուսուցիչ՝ Նարինե Մանուկյան

Դասի նպատակը ա) Համացանցի առավելությունների ընդգծում

բ) Գաղափար համացանցի մասին

Դասի տիպը՝ - Նոր նյութի հաղորդման դաս

Դասի մեթոդը՝ - զրույց բանավեճ

Ուսուցման միջոցը - Էլեկտրոնային գրատախտակ, համակարգիչ, ինտերնետ կապ, prezi ծրագրով ցուցադրություն, վիդեո տեսանյութ,

Դասի ընթացքը - ա) կազմակերպչական մաս

բ) խթանման փուլ

«Շատ շտապ կարևոր ինֆորմացիա քեզ համար»

Աշակերտ՝- Ես բավականին երկար ժամանակ շփվում էի գեղեցկադեմ երիտասարդի հետ, նրա հետ խոսելը ինձ շատ հաճելի էր, զրուցում էինք ամեն ինչի մասին, նա խնդրեց իրեն ուղղարկել իմ անձնական արխիվից լուսանկարներ։ Չմերժեցի։ Ես որոշեցի նրա հետ գնալ իրական հանդպման։ Հիասթափությունս շատ մեծ էր, իմ առջև կանգնած էր միջահասակ տղամարդ։ Ես դադարեցրեցի նրա հետ շփումը։ Մի քանի ամիս անց իմ լուսանկարները տեսա համացանցում, որը ինձ համար ցավալի էր։

Աշակերտ՝ «Ես ապրում եմ Տավուշի մարզում, սահմանից 200 մետր հեռավորության վրա»:

Աշակերտ՝- «Սա եղբորս նկարն է, այսօր նա ծառայում է հայոց բանակում»:

Քանի որ ռազմական գաղտնիքի մասին կարող է տեղեկանալ յուրաքանչյուրը, որը կարող է ճակատագրական լինել:

Սլայդ - Անձնական տվյալներ մի՛ ցուցադրեք։ Որևէ անձնական ինֆորմացիա մի՛ հայտնեք Համացանցի ձեր նոր ծանոթներին։

Համացանցում ծանոթացած նորահայտ անձի հետ իրական կյանքում հանդիպելը լավ գաղափար չէ, սակայն գնալու դեպքում միայնակ մի՛ գնացեք:

Աշակերտ՝ Իսկ ինձ հետ մի այսպիսի դեպք պատահեց: Գրականության դասին մեզ հանձնարարվեց Դերենիկ Դեմիրճանի՝ «Ավելորդը», ձեռքիս տակ չունենալով գրիքը, որոշեցի օգտվել էլեկտրոնային տարբերակից: Կանգնեցի բազմաթիվ փաստերի առաջ:

- Համակարգիչը ինձանից խնդրեց ներկայացնել որևէ անձնական տվյալ՝ ռոբոտ չլինելու հանգամանքը ստուգելու համար: Ես ուղղարկեցի նրան իմ հեռախոսահամարը:
- Ինձ զգուշացրեց, որ ես օգտվում եմ վիրուսոտ կայքից:
- Ներբեռնեցի գիրքը, չհետևելով համակարգչի հրահանգներին:

Հաջորդ օրը համակարգչիցս անհայտացել էին ինձ համար շատ կարևոր որոշ տվյալներ:

Սլայդ –Պաշտպանե՛ք ձեր համակարգիչը անցանկալի ինֆորմացիայից: «Avast Antivirus», «Kaspersky», «Dr.Web»,«Norton» սրանք հակավիրուսային այն ծրագրերն են, որոնք կօգնեն քեզ և քո համակարգչի անխափան աշխատանքին: Հետևե՛ք համակարգչի ազդանշանային համակարգին: Հաճախակի թարմացրե՛ք ձեր համակարգչի հակավիրուսային ծրագրերը:

Կարող է տպավորություն ստեղծվել, որ համացանցը միայն վտանգավոր է, բայց ոչ, այն իր առավելություններն էլ ունի: Համոզվենք դրանում: Որքան էլ խոսենք վտանգներից, ժամանակակից աշխարհը դժվար է պատկերացնել առանց ինֆորմացիայի փոխանցման այնպիսի գերհզոր միջոցի, ինչպիսին Համացանցն է:

- Աշխարհում **կրթությունը** բոլորին հասանելի է դառնում հենց համացանցի միջոցով: Նայենք մեր շուրջը, ինչքան սահմանապակ կարողություններով մարդիկ կան, ովքեր կարող են ստեղծել, արարել, դառնան հետաքրքիր ծրագրերի և մտահաղացումների հեղինակ, հենց համացանցն է տալիս նման հնարավորություն:

Սլայդ - Լիզի Վելասկեսը մեկ օր համացանցում տեսնում է մի հոլովակ՝«Աշխարհի ամենատգեղ կինը» անվանումով: Հոլովակում հենց Լիզին էր, ով ծնվել է մի սինդրոմով, որի ժամանակ ամբողջովին բացակայում է ճարպային շերտը: Հուսահատվելու փոխարեն նա վերցրել է գրիչն ու գրել մի քանի գրքեր:
Անորեքսիայով տառապող 26-ամյա աղջիկը, որը ճանաչվել է «ամենատգեղն աշխարհում», իր կյանքի դժվարությունների մասի ֆիլմ է նկարահանել:

- **Հեռավար ուսուցում:** Ապրելով Հայաստանում կարող ենք կրթություն ստանալ աշխարհի առաջնակարգ բուհերում, կան բազմաթիվ ծրագրեր որոնք հնարավորություն են տալիս անել դա:

Սլայդ - Հեռավար ուսուցումը համացանցի ժամանակակից ձեռքբերումներից է: Ժամանակակից հեռահաղորդակցման միջոցները ոչ միայն ստեղծում են դասավանդման համար հարմարավետ պայմաններ, այլև բարձրացնում են դրանց արդյունավետությունը:

Հեռավար էվրիստիկ օլիմպիադաներ: Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման առավել արդյունավետ միջոց են հանդիսանում հեռավար էվրիստիկ օլիմպիադաները: Այդպիսի օլիմպիադանաեր կարելի է անցկացնել բոլոր առարկաներից: Հայալեզու հեռավար ուսուցման համակարգի մի վառ օրինակ է վերջերս մեկնարկած Հայկական վիրտուալ քոլեջը (http://www.avc-agbu.org: TrueConf Online ծրագիրը նախատեսված է տեսակոնֆերանսների անցկացման համար, ինչ էլ իր հերթին հանդիսանում է հեռավար ուսուցման կազմակերպման անբաժան մաս: Ծրագիրը բավականին հարմարավետ է օգտագործման համար, արդյունավետ աշխատանքի համար ստեղծված են բազմաթիվ գործիքներ: Webinar.ru-ն հանդիսանում է տեսակոնֆերանսների անցկացման առաջատար հեռահարթակ Ռուսաստանում, ԱՊՀ-ում, և Արևելյան Եվրոպայի երկրներում: Skype և ooVoo լայն տարածում գտած աուդիո և վիդեո զանգերի համար նախատեսված ծրագրեր են,որոնցով ևս իրականացվում է հեռավար ուսուցումը:

- Համացանցը նաև հնարավորություն է տալիս տանը նստած գումար վաստակել: Խելոք ես գումար վաստակիր, բայց մինչև այդ պետք է ունենաս համապատասխան գիտելիքներ, իսկ դրա համար համբերություն և ժամանակ է պետ
- Ժամանցի միջոց կարելի է հանդիսանալ նաև համակարգչային խաղերը, որոնց կառուցվածքը և կիրառման մատչելիությունը հնարավորություն են տալիս այսօր դրանք օգտագործել, որպես ուսուցողական միջոց: Նման խաղի օրինակ է «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր» խաղը:
- Անցկացնենք քվեարկություն, ովքեր են կողմ, որ համացանցի առավելությունները գերիշխում են, ովքեր են դեմ, որ այնուամենայնիվ համացանցը վտանգավոր է, իսկ ովքեր են ձեռնըպահ:

Եվ ևս մեկ անգամ հի՛շենք, որ համացանցի չարաշահումը առաջացնում է

- առողջական խնդիրներ,
- մեկուսացում,
- զգացմունքայնության բացակայություն, խոսքի զարգացման արգելք,
- անտարբերություն միմիանց և շրջապատող միջավայրի հանդեպ,

այս ամենը ցավոք սպառնում է մեզ հասարակությանս:

Այսպիսով մենք հասկացանք, որ հանգիստ կարող ենք օգտվել համացանցից չչարաշահելով այն և պահպանելով անվտանգության կանոնները: